



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թ. հունիսի 7

N 61 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԳՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱՎԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հունիսի 1-ի N59-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Ա.Հակոբյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Գ.Մանուկյանը և առաջատար մասնագետ Գ.Սարգսյանը 2017 թվականի հունիսի 5-ից 7-ը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքում իրականացրել են ստուգում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանի կողմից Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի վարչական սահմաններում գտնվող, 02-022-0104-0001 կադաստրային ծածկագիրը կրող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքն օգտագործվել է ոչ նպատակային նշանակությամբ:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244⁹ և 54-րդ հոդվածներով՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ ԵՄ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **մեկ հարյուր հիսուն հազար** դրամ, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ **900005242921** հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ